

**SURFԵՐԱԿ 2**

**1.Բացատրել տրված բառազույգերի իմաստները, յուրաքանչյուրով կազմել մեկ նախադասություն:**

պաշտպանել-պահպանել

ծրագրել-ծրագրավորել

վերաբերել-վերաբերվել

փաստ-փաստարկ

(2 միավոր)

**2.Գրել հետևյալ օտարաբանությունների հայերեն համարժեքները:**

ռեյտինգ

ինվեստիցիա

ինաուգուրացիա

կոնտինգենտ

կոմպրոմիս

քվոտա

ապելյացիա

ֆորմատ

(2 միավոր)

**3.Տեքստից դուրս գրել այն բայերը, որոնցում կան հիմքակազմության սխալներ, և դիմացը գրել ճիշտ ձևը:**

1. Հարցի քննարկումից հետո միայն կողմերը համաձայնվեցին ստորագրել պայմանագիրը: 2. Խնդրի լուծման համար թերևս հարկ կլինի կապնվել իրավաբանական ծառայությունների հետ: 3. Մառանում շարված էին մեծ տակառներ՝ լի հնեցված գինով: 4. Կուսակցությունները վաղուց արդեն գաղափարներ են հարմարացնում իրենց գործելաոճին: 5. Դժվար է պնդել, թե հողվածում նկատի է ունեցվել գույքի մասնակի ոչնչացումը:

(1 միավոր)

**4.Տեքստից դուրս գրել հնացած կամ սխալ բայաձևերը և դիմացը գրել ճիշտ ձևերը:**

1. Հետազոտողները կառչել են աննշան փաստերից և դեպքերի ընթացքը վեր են լուծել ենթադրաբար: 2. Զինվորականներն անօդաչու թռնող սարք են հայտնաբերել գործարանի մոտ: 3. Մի՛ խաբվեցեք սուտ ու կեղծ քարոզողներին. նրանք են հենց ամենից մոլորյալները: 4. Ես չեմ սիրում ամբարտավան մարկանց, որոնք իրենց բարձր են դասում մյուսներից: 5. Որքան մոտիկանում էր դատավճիռը հրապարակելու պահը, այնքան դահլիճը աղմկում էր:

(1 միավոր)

**5.Տեքստի մեջ գտնել և ճշտել համաձայնության և խնդրառության սխալները:**

1. Ամերիկայի Միացյալ Նահանգները որոշում են ընդունել Ռուսաստանի դեմ համապատասխան պատժամիջոցներ կիրառելու մասին: 2. Ես մանրամասն հետազոտել եմ նյութը և քո բերած փաստարկները մեկ առ մեկ առարկում եմ: 3. Այդ ամենը՝ զարուհի, արևը, ծաղիկների բույրը, ամպերի պայծառ գույները, նրա սիրտը վրդովեցին անհանգիստ հույզերով: 4. Նրա բոլոր ձեռնարկումներին մերձավորները միշտ սատարում էին: 5. Մարդիկ որոշակի պայմաններում չեն կարողանում շահադիտական մղումով առաջնորդվող պաշտոնյային պարտադրել արձանագրելու օրենքի խախտումը: 6. Հյուսիս-հարավ մայրուղու կառուցումը էապես խթանելու է երթևեկությունը:

(2 միավոր)

#### **6. Կետադրել համր բնագիրը:**

Օմար Խայամը Խորասանի վշտահար բանաստեղծը նստած ոսկեղեն նարգիզների մեջ գինի էր ըմպում ոսկյա գավաթից: Այդ միջոցին հանկարծ քամի բարձրացավ որը խելագար պտույտներ գործելով հասավ Խայամին վայր զցեց գինու գավը ոսկեգույն հեղուկը թափելով գետնին: Զայրացավ Խայամը Աստծո դեմ: Ինչպես է համարձակվում այս հողեղեն էակը բերան բացել իմ դեմ մտածեց Աստված և պատժեց Խայամին: Ծովեց բանաստեղծի հուր խոսքեր ժայթքող բերանը և կարկամեց լեզուն: Անցավ ժամանակ ու զոջաց Խայամը: Արարիչը հասկացավ մեղավոր չէր բանաստեղծը: Նա ներելով բանաստեղծին վերստին շնորհեց և մեղրածոր գինի և իմաստուն խոսք մոռանալով վիրավորանքը:

(2 միավոր)

#### **7. Ո՞ր միտքը բնորոշ չէ Պ. Մևակի պոեզիայի գեղագիտական ծրագրին.**

1. Չպետք է կրկնել դասականներին, այլ շարունակել նրանց՝ ելակետ ու նպատակակետ ունենալով նոր կյանքը:

2. Ճիշտ է, նա գնում է խիզախման՝ հանուն բարդ համադրությամբ առանձնացվող պոեզիայի, բայց վերապահումով ընդունում է արվեստում պարզունակը, հեշտը:

3. Գրականությունը պետք է համապատասխանի ժամանակակից մարդու գույգորդական մտածողությանը:

4. Իսկական պոեզիան «ոգու կառուցվածքի» մեջ թափանցելու կարողություն է:

(1 միավոր)

#### **8. Ո՞ր պնդումը գեղարվեստական մարմնավորում չի ստացել Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»**

**պատմավեպում.**

1. Դեմիրճյանը թափանցել է պատմական իրադարձությունների էության մեջ, վեր հանել փաստի բուն ոգին՝ հենվելով նրա պատմականության վրա:
2. Ի տարբերություն Եղիշեի, որն ընդգծում է Վարդանանց պատերազմի կրոնական կողմը, Դեմիրճյանը այն համարում է ազգային-ազատագրական պատերազմ:
3. Դեմիրճյանը Վարդանին պատկերել է ոչ միայն իբրև ազգային հերոս, իբրև պետական ու քաղաքական գործիչ, այլև նրան ներկայացրել է կրոնական նահատակի լուսապսակով:
4. «Վարդանանք» պատմավեպում կարևոր տեղ է զբաղեցնում ժողովուրդը. հատուկ ընդգծված է հասարակ ժողովրդի ու Վարդանի միասնությունը:

(1 միավոր)

**9. Ի՞նչ գաղափարներ չի արտահայտել Ե. Չարենցը իր «Պատմության քառուղիներով» պոեմում.**

1. Բանաստեղծը հանրագումարի է բերել հայ ժողովրդի անցած ամբողջ ճանապարհը՝ քննության ենթարկելով մեր նախնիներից մնացած առասպելների ու լեգենդների վերածված պատմությունը:
2. Հեղինակը հայ ժողովրդի անցած այդ ամբողջ ժամանակը անվանել է «անանցյալ անցյալ», որովհետև սերունդների թողել է սուս բարոյական հաղթանակի փառքը, իսկ իրականում հայրենիքը ոտքի տակ տրորվել ու բաժան - բաժան է եղել:
3. Այս պոեմում Չարենցը ստեղծել է գայլի խորհրդանշանը, որը միայն հաղթանակի խորհրդանշան է դարձել մեր ժողովրդի համար, ինչպես հռոմեական պղնձյա գայլը:
4. Ե. Չարենցը իր ապրած ժամանակաշրջանի ծանր վիճակի զգացողությամբ հնչեցնում է տագնապի կոչնակները և ժողովրդին պատվիրում է չտրվել անցյալի հիշատակին, որպեսզի չկորսվի ներկան:

(1 միավոր)

**10. Նշված հատկանիշներից ո՞րը բնորոշ չէ վեպին.**

1. Պամոդական գրական ժանրերից մեկն է, որը հանգամանորեն ներկայացնում է հասարակական և անհատական կյանքի լայն պատկերը:
2. Ունի բազմաթիվ հերոսներ և շատ սյուժետային գծեր:
3. Նրանում գործողությունները սրընթաց են և ունենում են ասպասելի վախճան:

4. Արձակ բոլոր ժանրերից ամենամեծն է իր ծավալով ու ընդարձակումներով:

(1 միավոր)

**11. Սորը նվիրված քառատողերից յուրաքանչյուրը ձախ կողմում նշված հեղինակներից որևէ մեկինն է. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.**

ա. Հ. Շիրազ

բ. Ե. Չարենց

գ. Պ.Սևակ

դ. Վ. Տերյան

ե. Ավ. Բասիակյան

1. Հիշում եմ դեմքը քո ծեր,

մա՛յր իմ անուշ ու անզին,

Լույս խորշումներ ու գծեր,

մա՛յր իմ անուշ ու անզին:

2. Մեր հույսի դուռն է մայրս,

Մեր տան մատուռն է մայրս,

Մեր օրորոցն է մայրս,

Մեր տան ամրոցն է մայրս:

3. Ա՛խ, քո տեսքին, անուշ լեզվին

Կարոտցել եմ, մայրի՛կ ջան.

Երնե՛կ, երնե՛կ, երազ լինիմ,

Թըռնիմ մոտըդ, մայրի՛կ ջան:

4. Մայրս ուներ ձեռներ բարակ,

Մոմե մատներ՝ երկար ու նուրբ,

Մեղմ աչքերում՝ զգվող կրակ,

Այնտեղ բարի և այնքան նուրբ:

5. Այս ձեռքերը՝ մո՛ր ձեռքերը,

Հինավուրց ու նոր ձեռքերը...

Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը,

Լույսը մինչև լույս չեն մարել այս ձեռքերը:

1) ա-1 բ-2 գ-3 դ-4 ե-5

2) ա-2 բ-1 գ-5 դ-4 ե-3

3) ա-2 բ-1 գ-4 դ-3 ե-5

4) ա-2 բ-3 գ-1 դ-5 ե-4

(1 միավոր)

**12.Շարադրության առաջարկվող թեմաներ՝ «Մեծ կյանքի շեմին», «Մենք քիչ ենք, բայց հայ ենք» /ընտրել առաջարկված թեմաներից մեկը/:**

(5 միավոր)

